ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՇԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեր ուսումնարանները չեն կարող պարծենալ, թէ այն տեղ շարադրութեան գործը ծաղկեալ վիճակի մէջ է։ Աշակերտները թէպէտ շատ են գրում, բայց շարադրել հազիւ թէ սովորում են։ Շարադրելու համար նախ և առաջ հարկաւոր են մտքեր։ Իսկ մեր աշակերտները գրում են առանց տէր լինելու շարադրութեան նիւթին։ Այս մի ողբալի ճշմարտութիւն է, որ պէտք է անկեղծութեամբ խոստովանենք, առանց ծածկելու իրողութիւնը։ Նախ մտքեր, ապա գրել,—ահա այս պէտք է լինի շարադրութեան առաջին և վերջին կանոնը։ Մտքեր ասելով պէտք է հասկանալ կենդանի մտածողութիւն իւր մերձաւոր և հեռաւոր յարակից զուգորդութիւններով, և ոչ թէ լոկ դատարկ բառեր, թուղթակի մեռեալ բառեր։ Այս պահանջը հեշտ է յայտնել, բայց դժուար է կատարել։ Ապա ուրեմն հասկանալի է, թէ որքան կարևոր է մի հրահանգ ունենալ այդ գործը քայլ առ քայլ և հիմնաւորապէս իրականացնելու համար։ Ես պէտք է փորձեմ, գերմանական լաւ փորձուած օրինակներին հետևելով, մի այդպիսի հրահանգ կազմել մեր ազգային դրականութեան նիւթերով։ Այդ կերպի շարադրութեան ուսուցման մանրամասն տեսութիւնը ուրիշ անգամի թողնելով, առ այժմ գործնական բաժնի մի գլուխ առաջ եմ բերում այստեղ, որպէս ճաշակ և խորհրդածութեան նիւթ մեր ուսուցիչներին։ Այս գլուխը ստորին աստիճանին է պատկանում, այն է՝ թեմական դպրոցների ա. դասարանին և ծխական ուսումնարանների համապատասխան բաժանմունքներին։ Երևի ուսուցիչները խոհոյն կը նկատեն, որ այստեղ ներկայացրած է մի անսովոր եղանակ շարադրել սորվեցնելու համար։

ԱՋԲԱԾԱԿ ՇՈՒՆԸ

Մի շուն՝ մսալի ոսկորը բերանին՝ անց էր կենում կամրջով։ Կամրջի տակից վազող ջուրը հայելու պէս պարզ ու յստակ էր։ Շունը ջրի մէջ նկատում է իր պատկերը. բայց կարծեց, թէ մի ուրիշ շուն է անցնում ջրի երևսով։ Սա էլ բերանին ունէր մսի մի մեծ կտոր։ Այս

երևոյթից մեր շան խելքը գնաց. Նա իսկոյն կլանչեց, կորցրեց իր բերանի պատառը ու ցած թռաւ կամուրջից,— հերիք չհամարելով իր ունեցածը, ուզեց օտար շնից էլ խլել մսի կտորը. Բայց աւա՜ղ՝ ջրի մէջ ոչ շուն կար, ոչ միս. խեղճ աչքածակը խաբուել էր իր շուքից.

«Մայրենի լեզու» Տ. Ղլտճեանի

Այս առակը գրելիս առակախօսը իւր մտքում ինչ հարցմունքներ պիտի ունենար. Առակախօսը հանդիպում է մի շան: Ի՞նչ է տեսնում: Շունը մի մսալի ոսկոր ունի բերանին և անց է կենում կամրջով: Էլ ի՞նչ է տեսնում: Կամրջի տակի ջուրը հայելու պէս է: Ուրեմն առաջին հարցմունքներն են—«Ի՞նչ ունի շունը», «ի՞նչ է անում», «Ի՞նչպէս է ջուրը»: Նա ջրին է նայում: Այս բանի մէջ քեզ ի՞նչ է հետաքրքրում: Թէ արդեօք նա «Ի՞նչ է նկատում մէջը»: Բայց նա մոլորվում է տեսածից, չի հասկանում բանի էութիւնը: Իսկ դու պատմածից ի՞նչ ես իմանում: Թէ նա «Ի՞նչ է կարծում» իւր մոլորութեամբ: Հիմի մենք կուզենանք իմանալ այս մոլորութեան հետևանքը, վախճանը: «Հետևանքն ի՞նչ եղաւ» Ա. Բ. Գ. Դ. Այս բոլորը ի՞նչ դրդումներով կատարուեց: «Ի՞նչ պատճառով» Ա. Բ. Իսկ «փոխարէնն ի՞նչ գտաւ»: «Ինչի՞ց էր խաբուել»:

Հարցմունքներն ամփոփած.

1. Շունը ի՞նչ ունի, ի՞նչ է անում, ի՞նչպէս էր նրա տեսած ջուրը:

2. Ի՞նչ է նկատում ջրի մէջ:

3. Ի՞նչ է կարծում:

4. Այդ բանի հետևանքն ի՞նչ եղաւ:

5. Ի՞նչ պատճառով:

6. Շունը փոխարէնն ի՞նչ գտաւ:

7. Ինչի՞ց էր խաբուել:

Նոյն հարցմունքների պատասխանը (յիշողութեամբ) բանաւոր՝ ապա և գրաւոր կերպով.

1. Շունը բերանին ունի մի մսալի ոսկոր. անցնում է կամրջով. որի տակի ջուրը հայելու պէս խաղաղ է: 2. Ջրի մէջ նկատում է նա իւր պատկերը: 3. Բայց կարծում է թէ տեսնում է մի ուրիշ շուն՝ մսի մեծ կտորը բերանին: 4. Նա խելքը կորցնում է (Ա), կլանչում է (Բ), բաց է թողնում իւր բերնի պատառը (Գ), ցած է թռչում կամրջից (Դ): 5. Որովհետև՝ հերիք չէր համարում իւր բերանի մէջ ունեցածը, ան–

գոնուանակ էր (Ա), այլ ուզեց միւս շան բերանից էլ խլել մսի կտորը (Բ)։ Սակայն ջրի մէջ չգտաւ ոչ շունչ, ոչ միս, մանաւանդ որ իւր պատառից էլ զրկուեցաւ։ Դ. Նա խաբուել էր իւր շուքից։

Մաքերի շարքի փոփոխութիւն.

Կամրջին վազելով և սողոսկելով մօտեցաւ մի շուն։ Նա բերանին ունէր գողացած մսի կտոր։ Ջրի մէջ յանկարծ տեսաւ մի ուրիշ շուն։ Բայց տեսածը լոկ միայն ջրի մէջ ցոլացած իւր պատկերն էր։ Ի հարկէ այդ օտար շունն էլ մսի կտոր ունէր բերանին։ Մեր շունը այլ ևս հերիք չհամարեց իւր ունեցած մսի պատառը։ Ուզեց օտար շան պատառին էլ տիրանալ։ Կրակի պէս թռաւ ջրի մէջ։ Այդ ժամանակ իւր բերանից միսը ընկաւ ջուրը։ Մնաց դատարկ և փոխարէն ոչինչ չստացաւ։

Կամ.—Նա տեսայ՝ մի շուն յանկարծ թռաւ կամրջից ջուրը և նրա բերանից մսի կտորն ընկաւ ու ջրի մէջ անյայտացաւ։ Խեղճը երևի ջրի մէջ տեսել էր իւր պատկերը, բայց կարծել էր, թէ այն մի ուրիշ շուն է, մսի պատառը բերանին։ Անշուշտ ուզեցել էր այն էլ առանալ և այլն, և այլն։ Այսպէս նա դատարկ մնաց նաև իւր ունեցածից։

Պատմելուկի ընդարձակումն.

Կրկնիր, ինչպիսի շուն դողացել էր մի ոսկոր, այն ևս ինչպիսի ոսկոր, ինչպիսի ջրին մօտեցաւ նա։ Հիմի ասա, որ տեղից կարող էր նա գողանալ այն ոսկորը, ինչից երևեցաւ շան աչքածակութիւնը, ինչպէս պէտք է կոչուի իւր կրած պատիժը։ Նա ո՞ւմ շունն էր, երբ կարող էր գողանալ, ինչպէս պէտք է գուրս բերէր գողոնքը և ինչպէս պիտի աշխատէր այն փախցնել, ինչո՞ւ։ Ինչպէս չքուեցաւ բերանի պատառը, ինչ հալի կը լինէր շունը այդ բանից, ինչ ճար պիտի անէր իւր դլխին, բայց ինչո՞ւ չարեց և այլն, և այլն։

Այս հարցմունքների պատասխանն առնելուց յետոյ, բոլոր նիւթից ձևակերպել մի շարադրութիւն բանաւոր՝ ապա և գրաւոր կերպով։

Նմանատիպ կրթութիւնները.

Շուն եւ երկու նապաստակ։ Մի որսկան շուն հետամուտ էր մի նապաստակի։ Այդ միջոցին նա յանկարծ նկատում է մի երկրորդ նապաստակ ևս ուրիշ կողմից։ Այժմ նա ուզում է երկուսին էլ տիրանալ։ Սկսում է հալածել երկրորդին, և այդպէս նա քիչ քիչ յոգնում է։ Հետևանքը։

Կատու եւ երկու մուկ։

Աղուէս եւ երկու նաւ եւ այլն։

Աչքաճակ շունը խաբուեց իւր պատկերից. նոյն վիճակն է ենթարկուում «Խիզախ երեխան»։

ԽԻԶԱԽ ԵՐԵԽԱՆ

Մի օր գաղթականի տղէն, վեց տարեկան Պօղոսը, իւր փայտէ ձին հեծած, առաջին անգամ բարձրացաւ իրանց ստորնայարկ կացարանից վերնայարկի պատշգամբը. մտաւ աղայի սենեակը։ Այն տեղ ոչ ոք չկար, սակայն պատին կախ էր տուած մի մեծ սիրուն հայելի։ Նրա մէջ Պօղոսը տեսաւ մի երեխայ, որը որ սորան նայում էր զարմացած։ Հայելու միջի կարմրաթուշ և սևաչեայ երեխան շատ գեղեցիկ էր։ Պօղոսը հիացած՝ ժպտաց։ Երեխան էլ ժպտաց։ Այս ժպիտը Պօղոսին ուրախացրեց. նա ձեռքով նշան արեց երեխին և ասաց. «Արի. կուզես քեզ նստեցնեմ ձիու վրայ»։ Երեխէն էլ ձեռքով նշան արեց։ Պօղոսը գլուխը շարժելով ասաց. «Չէ, եկ դու ինձ մօտ, ես չեմ գայ»։ Երեխէն էլ գլուխը շարժեց, մերժողական նշանով։ Պօղոսը տխրեց և թթու կերպարանք շինեց. երեխէն էլ նոյնպէս թթուեց։ Հիմի Պօղոսը սպառնաց բռունցքով։ Երեխէն էլ սպառնաց բռունցքով։ Պօղոսը նեղացաւ և երեխի դէմ լեզուն հանեց։ Երեխէն էլ լեզուն հանեց։ Այս անգամ Պօղոսը չարացաւ և սկսեց իւր ձի-գաւազանով չարաչար ծեծել անպիտան երեխին։ Բայց աւա՜ղ, հայելին հազար կտոր եղաւ։—Հիմի աղէն ինչ վայ պէտք է բերէ գաղթական ծառայի գլխին, որ սրա դաւակը այսչափ խիզախ է եղել։

Հեղինակի «Իրազննական դասեր»

Մի եղջերու ևս խաբուում է իւր պատկերից։ Բայց այս տեղ պատժուում է ոչ թէ անգոհունակութիւնը, այլ պարծենկոտութիւնը.

ԵՂՋԵՐՈՒ

Մէկ եղջերու սառն աղբիւրի
Ջուրն էր խմում խուլ մորում.
Եւ տեսաւ շուքն իւր եղջիւրի
Այն աղբիւրի ջինջ խորում։

Երկար, երկար նայեց բիւրեղ
Ջրի խորումն անսասան,
Ապա կանչեց. «Ինձ պէս զօրեղ
Դեռ չի եղել այլ դաղան.

Ես անառիկ Անտիոքեան
Այս եղջիւրով կաւերեմ,
Նրա զօրքեր, զէնք ու ձիան
Մէկ հարուածով կը գերեմ»։

Եւ նա տեսաւ իրան առաջ
Ահիւծ ահեղ ու վայրագ.
Լեղապատառ, լալաբառաչ
Փախաւ քամուց էլ արագ։

Բայց անտառում յանկարծ ծառից
Եղջիւրը նրան բռնեցաւ։
Նա մահն առաւ այն պատճառից,
Ինչի վրայ յոյս դրեց . . .

Նահապետ Քուչակ (Գ. Ասատուրի մշակած)

Շատ աչքածակութեան դէմ մի ուրիշ տեսակի աչքածակութիւն էլ կայ—ագռաւի աչքածակութիւնը.

ՍԵՒ ԱԳՌԱՒԻՆ ՈՒ ՀԱՒԸ

Սև ագռաւն ագահ գող բնութիւն ունի.
Ինչ որ ձեռքն ընկնի, գողանալ տանի։
Մէկ էսպէս ագռաւ տանէր ամէն օր, ուր ինքն քնէր,
Ոսկի թէ արծաթ, ալմաղ, մարգարիտ բնումը պահէր։
Հաւն տեսնելով, «այ իմ բարեկամ, հարցրեց նրան,
Էսպէս բաներից ինչ օգուտ ունիս, որ միշտ ժողովես.
Քեզ դրանք ոչ հաց, ջուր, և ոչ կերակուր, ոչ ապրուստ կուտան»։
—Ախ դու հէր օրհնած, պատասխան տուեց ագռաւն, ժպտալով.
Աչքածակ, ագռաւն ինչ կը հարցնի օգուտ կամ ինաս։
Միտն է գողանալ, խլել, յափշտակել և տանը պահել,
Թէկուզ փիթին էլ՝ էս տեսակ բաներ մենք չենք հարցնել։

Խաչ. Աբովեան

Շան պատմութիւնը տալիս է նաև առակախօս Լաֆոնթէնը, բայց ինչ տարբերութեամբ (համեմատել և «պատմութիւն» ու «խրատ» ջոկ ջոկ որոշել)։

ՇՈՒՆ ԵՒ ՄՏՈՒԵՐ

Աշխարհի վրայ
Միշտ խաբուելու ենք ենթակայ։
Այնքան շատ են այն յիմարներ,
Որք սառուերին
Վազեն եռուին՝
Որ անոնց թիւ մարդ չդիտէր։
Զանոնք արժան է խրկել Շան՝
Որու վրայ
Եզոբոսի առակը կայ։
Այս անխելք Շուն, որ իր բերնի որսին պատկեր
Վաղուկ ջրի մէջ տեսած էր՝
Որսը թողուց ու եռուէ վազեց շուքին։
Փիչ մնաց որ ողորմելին
Ալիքներու մէջ խըղդըւէր։
Խիստ դժուարաւ
Եզերք հասաւ։
Որս ու ըստու�ր անհետած էր։
Լաֆոնթէն (թարգ. Մ. Նուպ.)

Գոհունակ վիճակի օրինակ է տալիս հովիւը իւր պարզ և սակաւապէտ կեանքով, տոկալու զուարթ սրտով։

ՀՈՎՈՒԻ ԱՆԿՈՂԻՆԸ

Սարի լանջն է մահճակալ
Ձեչոտ քարը՝ գլխակալ։
Մի հին կարպետ ուսերին,—
Այս է հովուի անկողին։

Երբ անձրև է կաթկաթում
Եւ կապերտը թրխթրխկում,
Հովիւն անուշ քնի մէջ
Փաղցր երազ է տեսնում,

Եւ խնդում, ծիծաղում.
Ուխայ, ուխայ. սիրուն հովիւ.
Քունդ անուշ . . .

Ղ. Աղայեան.

Առտնին լուծելու խնդիրներ.

Հարկաւ այս խնդիրների կարեւոր նախապատրաստութիւնները պէտք է կատարուին դպրոցում, ուսուցչի առաջնորդութեամբ:

1. *Իւրաքանչիւր նախադասութեան մէջ բայն մերկացրու միւս բառերից և այդպէս ստացած մերկ առարկաները դասաւորիր խաչը տակ: Նոյնպէս մերկացրու բայերը և այդպէս պարզած բայերը դիր առարկաների հանդէպ.*

   Օրինակ. Մի շուն անց էր կենում
   Ջուրը խառակ էր
   Սա ունէր և այլն:

2. *Մեր առակի ո՞ր բառերի վերջադաս բաղաձայնը պէտք է հնչելիս միացնել հետեւեալ բառի նախադաս ձայնաւորի հետ («անց էր կենում»—ան ցէր): Այդ պատահում է թուով 10 անգամ: Նոյն բառերով նոր նոր նախադասութիւններ կազմիր, օրինակ. «Փոթորիկն անց էր կենում», «Խեղճ աչքածակը մնաց թուքը բերանում» և այլն:*

3. *Մեր կարդացած հատուածների մէջ պատահում են այսպիսի* ժողովրդական, կրճատ, *կամ նոյն իսկ* անուղղագրական *ձեւեր ու դարձուածներ.*

   «Աղուան ի՞նչ կը հարցնի օգուտ կամ վնաս.

   «Այնքան շատ են այն *յիմարները, որք . . :» եւն:*

   Ցոյց տուր դրանց գրականական *ձեւերը և հատուածների մէջ ջոկիր ուրիշ աւելի կամ պակաս նշանաւոր օրինակներն եւս:*

4. *«Ոսկոր», «մսալի ոսկորը»—ի՞նչ նշանակութիւն է տալիս «ը» յօդը: Պատմելուկի այն բոլոր բառերը հաւաքիր, որոնք «ը» յօդով են որոշուած, և թէ իւրաքանչիւրը նրանցից ի՞նչ բառով է որոշուած: Շատ անգամ որոշիչ բառը զօրութեամբ է իմացւում.*

«շունը նկատում է իր պատկերը»—այսինքն այն շունը։ Այդ բոլոր բառերից (իբանց որոշիչներով՝ եթէ յայտնապէս նշանակուած են) կազմիր նոր նոր նախադասութիւններ, զոր օր. «Մսալի ոսկորը շան համեղ կերակուր է», «Շունը չորքոտանի (կենդանի) է», «վազող ջուրը քըշքըշան կը լինի» և այլն։

5. Մեր ձեռակերպած հարցմունքներով շարադրիր «Աչքածակ շան» առակը։
6. Նոյնը պատմիր անցեալ ժամանակի ձևով։
7. Թող որ շունը պատմէ իւր վէպը։
8. Վէպը զեկուցանում է շների բազմութիւնը։
9. Խօսիր շան հետ, եղելութիւնը հարցափորձ անելով։
10. Պատմիր մի շան և երկու նապաստակի մասին։
11. Կատու և 2 մուկ։
12. Աղուէս և 2 հաւ։
13. Ընդարձակիր և ճոխացրու պատմելուկը նոր նոր՝ բայց կարևոր հանգամանքներով։
14. Երևակայիր, որ քո առջև պատկերանում է շան մերձեցումը կամրջին, և ոճով ու կարգով պատմիր մի միայն տեսածներդ (առանց ենթադրութիւններ անելու)։

Սեդրաք Մանդինեան.